Պ Ա Ր Զ Ա Բ Ա Ն Ու Մ

Ի պատասխան № TIIG-11 «Մեքենաների և սարքավորումների գնում համայնքների համար» մրցույթի վերաբերյալ 19.05.2020թ. ժամը 16:47:13 Armeps համակարգով և 21.05.2020թ. 19:39 էլ-փոստով ստացված հարցումներին ներկայացնում ենք հետևյալ պարզաբանումները.

1. Հարց՝ «... խնդրում եմ պարզաբանել այն դեպքում, երբ միևնույն Լոտ-ում ընդգրկված ապրանքների համար սահմանված են տարբեր հարկային կարգավորումներ ավելացված արժեքի հարկի մասով, հայտի գնային առաջարկի հարկերին վերաբերող մասում ինչպես պետք է ներկայացվեն/ լրացվեն ԱԱՀ-ի գումարը:»

Պատասխան՝ Բոլոր ապրանքների գները պետք են ներկայացվեն համաձայն «Գնացուցակ» ձևաթղթի 5-րդ սյունյակի «Վերջնական առաքման վայր տեղափոխված միավորի արժեք», որը պահանջն է՝ «նշել վերջնական առաքման վայր տեղափոխված միավորի արժեքը (ներառյալ ուղղակի և անուղղակի հարկեր, մաքսային վճարումներ, պարտավորություններ, Գնորդի երկրում փոխադրումներ, ապահովագրություն և այլ տեղական ծառայություններ (եթե առկա են))»:

Ուստի, յուրաքանչյուր ապրանքի համար, եթե միևնույն Լոտ-ում ընդգրկված ապրանքների համար սահմանված են տարբեր հարկային կարգավորումներ, անհրաժեշտ է ապրանքի միավորի արժեքը ներկայացնել մեկ թվով, առանց ներառված բաղադրիչների գների բացվածքի:

2. Հարց՝ «TIIG-11 մրցույթային փաթեթում լոտ-5-ում նախատեսված է 1 հատ թրթուռավոր տրակտոր 3-րդ քարշակ դասի, թեքվող բուլդոզերային հրիչով:

Ձեզ համար ընդունելի կլինի՞ մատակարարել թրթուռավոր տրակտորը առանձին և թեքվող բուլդոզերային հրիչը առանձին ու գնացուցակում նշել՝

1. թրթուռավոր տրակտոր
2. թեքվող բուլդոզերային հրիչ:»

Պատասխան՝ Մատակարարվող ապրանքները կարող են առաքվեն մի քանի փուլով, բայց հանձնման պահին պետք է լինեն ամբողջական կազմով: Մրցութային ձևաթղթում ներկայացվող ապրանքները պետք է նշվեն այնպես ինչպես տրված է մրցութային փաստաթղթով՝ մեկ տողով, սակայն հետագայում ապրանքները մատակարարման ժամանակ, հարկային հաշիվն ներկայացնելիս, մատակարարը կարող է ապրանքները ներկայացնել այն կազմող բաղադրամասերով՝ մի քանի տողերով:

Հարգանքով՝

Արեգ Եղիյան
№ TIIG-11 մրցույթի քարտուղար
ՀՏԶՀ

23 մայիսի 2020թ.